ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2



HABITUS 2

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

2

H A B I T U S

STUDIES IN ANTHROPOLOGY AND ARCHAEOLOGY

2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

2

H A B I T U S

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ И АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

2

«GITUTYUN» PUBLISHING HOUSE
YEREVAN 2017

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
ЕРЕВАН 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 125

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Պավել Ավետիսյան (*գլխավոր խմբագիր*), Լևոն Աբրահամյան, Գրեգորի Արեշյան, Ռուբեն Բադալյան, Պիտեր Քաուի, Տորք Դալալյան (*պատասխանատու քարտուղար*), Պատրիկ Տօնապետեան, Միհրան Գալստյան, Սարգիս Հարությունյան, Թամար Հայրապետյան, Լորի Խաչատուրեան, Թեո վան Լինտ, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Ջուստո Տրաինա

Editorial Board:
Pavel Avetisyan (*editor-in-chief*), Levon Abrahamian, Gregory Areshian, Rouben Badalian, Peter Cowe, Tork Dalalyan (*assistant editor*), Patrick Donabédian, Mihran Galsyan, Sargis Harutyunyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Համարի գրախոսներ՝
Հարություն Մարության, *պատմական գիտությունների դոկտոր*
Արսեն Բոբոխյան, *պատմական գիտությունների թեկնածու*

Համարի խմբագիրներ՝
Համլետ Մելքումյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Ռոման Հովսեփյան, *կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդաբանություն, հնագիտություն թեմատիկ երգիծանկարների հեղինակ՝ ազգագրագետ Լևոն Աբրահամյան

The volume is edited by Hamlet Melkumyan *and* Roman Hovsepyan
The cartoons are authored by Levon Abrahamyan, *anthropologist*

Հ 125 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻ-ՏՈՒՍ 2: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան – Եր.: Գիտություն, 2017. – 264 էջ:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-1293-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սուսաննե Ֆիլինգս
Հայոց պատմությունը քաղաքային առօրեականության մեջ 10

Համլետ Մելքումյան
Հիշողությունից ազգայնականությո՞ւն,
խորհրդային և հետխորհրդային հուշարձանները 42

Էլեն Գրիգորյան
Եվրատեսիլ երգի մրցույթը որպես ինքնությունների,
ազգայնականության և քաղաքականության արտահայտման բեմ 65

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանուկյան
Կյանքը դեֆիցիտի պայմաններում. կանացի հագուստի
պրակտիկաները Երևանում 1970-80-ականներին 93

ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլլի Պոնոմարյովա
Բնիկ թիֆլիսցիներ թե՞ Սփյուռք. քննարկում թիֆլիսաբնակ
հայերի կարգավիճակի շուրջ 117

Սյուզաննա Բարսեղյան
Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերար-
տադրման և տարածման գործում 142

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲՌՆԱԳԱՂԹ

Շուշանիկ Ղազարյան
ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման
գործընթացում հայերենի իմացության խնդիրը 152

Հասմիկ Գրիգորյան
Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ».
բռնության օրինականացման մշակութային գործոնները 163

Լուսինե Տանաջյան
Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները
Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 184

Սոնա Ներսիսյան
Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 195

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոման Հովսեփյան
Հնաբուսաբանական նմուշառում. դաշտային աշխատանքների ուղեցույց 212

Արթուր Պետրոսյան
Քարե գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան 217

Աննա Ազիզյան
Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ 238

Ավետիս Գրիգորյան
Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները 249

CONTENTS

CULTURAL ANTHROPOLOGY

IDENTITY AND NATIONALISM IN PUBLIC SPACES

Susanne Fehlings
Armenian History in Urban Everyday Life 10

Hamlet Melkumyan
From Memory to Nationalism?
The Soviet and post-Soviet Memorials in Rural Daily Life 42

Elen Grigoryan
Eurovision Song Contest as a Stage: Performing Identities,
Nationalism and Politics 65

SOVIET DAILY LIFE

Lilit Manukyan
Living in Deficiency: Female Clothing Practices in Yerevan in 1970-80s 93

DIASPORA AND NATIONALISM

Elli Ponomareva
Native Tbilisians or Diaspora: Negotiating the Status
of Armenians in Tbilisi 117

Syuzanna Barseghyan
The Role of Armenian Press in Reproduction and Dissemination
of Ethnic and Cultural Values in the Diaspora 142

WAR AND FORCED MIGRATION

Shushanik Ghazaryan
The Importance of Armenian Language in the process of integration
of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia 152

Hasmik Grigoryan
From The Armenian Genocide to the “4-Day War”
Cultural Factors of Violence Legalization 163

Lusine Tanajyan
Social-professional Features of Integration of Syrian-Armenian
Immigrants in Armenia 184

Sona Nersisyan
Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia 195

ARCHAEOLOGY

Roman Hovsepyan
Archaeobotanical sampling: Instructions for fieldwork 212

Artur Petrosyan
Methodology for the Study of Stone Artefacts 217

Anna Azizyan
Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia 238

Avetis Grigoryan
The History of Investigation of Antique
and Medieval Sites of the Sotk Region 249

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



CULTURAL ANTHROPOLOGY

6

Սյուզաննա Բարսեղյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Սփյուռքի հետազոտությունների բաժին

Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերարտադրման և տարածման գործում

Սփյուռքի ավանդական ինստիտուտների շարքում կարևոր դերակատարություն ունի էթնիկ մեդիան: Հայկական սփյուռքի տարբեր համայնքների ձևավորման պատմությունն ուղեկցվել է մամուլի ստեղծմամբ: Այն ոչ միայն նպաստել է էթնոմշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը, այլև նշանակալի դեր է կատարել ներգաղթյալների ամենօրյա կյանքում և էթնիկ համայնքի միավորման, ինքնակազմակերպման գործում: Ներկայիս գլոբալացվող և տեխնոլոգիական ժամանակաշրջանում էթնիկ մամուլը կարող է ստանձնել առավել մեծ դերակատարություն՝ ստեղծվելով տրանսազգային կոմունիկացիոն ցանց հայրենիքի ու սփյուռքի համայնքների միջև և ձևավորվելով որպես ընդհանրական արժեքային համակարգ:

Հոդվածի նպատակն է ցույց տալ էթնիկ մեդիայի դերը մշակութային և էթնիկ ինքնության պահպանման, արժեքների վերարտադրման և տարածման գործընթացներում: Աշխատանքը ենթադրում է հետևյալ խնդիրների առաջադրումը.

- պարզել մամուլի ազդեցությունը էթնիկ և մշակութային ինքնության պահպանման վրա,
- գնահատել մամուլի դերը էթնոմշակութային արժեքների վերարտադրման և տարածման գործում,
- դուրս բերել մամուլի տարածած առանձնահատուկ և ընդհանուր (տեղային և համընդհանուր) էթնիկ արժեքները, սիմվոլները, միֆերը և գաղափարները:

Աշխատանքը հիմնված է հայկական Սփյուռքի տիպային երեք համայնքների՝ Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի մամուլի համեմատական հետազոտության տվյալների վրա: Մամուլի ուսումնասիրությունն իրականացվել է բովանդակության վերլուծության մեթոդով: Այն ընդգրկել է երեք պարբերականների՝ «Ноев Ковчег» (Մոսկվա), «Ալիք» (Թեհրան), «Ասբարեզ» (Լոս Անջելես) վեց տարվա (2005-2010թթ.) հրատարակությունները (ներկայացուցչական ընտանիքով):

Բանալի բառեր. *Սփյուռք, էթնիկ մեդիա, ինքնություն, մշակութային արժեքներ, բովանդակության վերլուծություն:*

Syuzanna Barseghyan
Institute of Archaeology and Ethnography
Department of Diaspora Studies

The Role of Armenian Press in Reproduction and Dissemination of Ethnic and Cultural Values in the Diaspora

Ethnic media is played an important role among the Diaspora's traditional organizations created for preserving ethnic identity. The history of the Armenian Diaspora communities' formation was accompanied by creation of a press. It was not only contribute to preservation and dissemination of ethnic and cultural values, but also played a significant role in everyday life of immigrants, in ethnic communities' consolidation and self-organization process. In the current globalized and technological era ethnic media

could assume a greater role to establish transnational communication network between homeland and diaspora communities and to form common system of values.

The aim of presented article is to show the role of ethnic media in the preservation of cultural and ethnic identity, in the processes of reproduction and dissemination of values. The article examines following research objectives:

- Determine the impact of press on ethnic and cultural identity;
- Evaluate the role of press in reproduction and dissemination of the ethnic and cultural values;
- Find the special and general (local and global) ethnic values, symbols, myths and ideas spreaded by press.

The article examines comparative analysis of three ethnic press in Los Angeles ("Asbarez"), Tehran ("Alik") and Moscow ("Noyev Kovcheg"). The study was conducted through content analysis method and included six years (2005-2010) publications of three periodicals.

Key words: *Diaspora, ethnic media, identity, cultural values, content analysis.*

Сюзанна Барсегян

Роль армянской прессы в репродукции и распространении этносоциальных ценностей в диаспоре

Этнические медиа играют важную роль среди традиционных организаций диаспоры. История формирования армянских общин сопровождалось созданием прессы. Это не только способствовало сохранению и распространению этнических и культурных ценностей, но и сыграло важную роль в консолидации и самоорганизации общин. Целью статьи является изучение роли этнических медиа в сохранении этнокультурной идентичности. В статье рассматривается контент-анализ трех газет в Лос-Анджелесе, в Тегеране и в Москве.

■■■

Որպես ավանդական Սփյուռք (Tololyan 1996: 1-2)՝ հայկական Սփյուռքն ունի էթնիկ ու մշակութային ինքնությունը պահպանելու ավանդական համայնքային ինստիտուտներ՝ եկեղեցի, դպրոց, կուսակցական, բարեսիրական, մշակութային և այլ կազմակերպություններ: Հայկական Սփյուռքի տարբեր համայնքների ձևավորման պատմությունն ուղեկցվել է նաև մամուլի ստեղծմամբ: Աշխարհի տարբեր երկրների հայկական գաղութներն ավանդաբար ստեղծել են հայկական մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմավորման և կարողությունների զարգացման նոր մակարդակի մասին: Այն ոչ միայն նպաստել է էթնոմշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը, այլև նշանակալի դեր է կատարել ներգաղթյալների ամենօրյա կյանքում, էթնիկ համայնքի միավորման, ինքնակազմակերպման և տվյալ երկրում նրա դերի կարևորման գործում:

Մի կողմից՝ աշխարհում աճող միգրացիոն մեծ հոսքերը, գլոբալիզացիան և սոցիալական փոփոխությունները, մյուս կողմից՝ Սփյուռքում տեղի ունեցող փոփոխությունները, ավանդական ինստիտուտների դերի նվազումը բարձրացնում են էթնիկ մեդիայի դերակատարությունը և անհրաժեշտ դարձնում դրա ուսումնասիրությունը: Էթնիկ մեդիայի միջոցով կարելի է հասանելի դարձնել գաղափարներ և հասկանալ էթնիկ խմբին, ինչը հնարավոր չէ հիմնական լրատվամիջոցներով:

Ինչպես ԶԼՄ-ների մասին նշում է Ա. Մոլը. «Դրանք փաստացի վերահսկում են մեր ողջ մշակույթը և անցկացնում իրենց զտիչների միջով, մշակութային երևույթների ընդհանուր զանգվածից առանձնացնում են առանձին տարրեր և տալիս դրանց հատուկ կշիռ, բարձրացնում են մի գաղափարի արժեքը, արժեզրկում մյուսը և այդպիսով բևեռացնում մշակույթի ողջ դաշտը: Այն, ինչը չի ընդգրկվել զանգվածային հաղորդակցության խողովակների մեջ, մեր ժամանակներում գրեթե ազդեցություն չի գործում հասարակության զարգացման վրա» (Kapa-Myp3a 2005: 274): Մեդիայի այդ դերն առավել գործուն է, երբ մարդը երկիմաստ, անորոշ կամ ճգնաժամային իրավիճակում է: Այս իրավիճակը բնորոշ է նաև օտար միջավայրում գտնվող ազգային փոքրամասնություններին կամ էթնիկ խմբերին, ովքեր առավել հակված են վստահելու սեփական լրատվամիջոցին: Մշակութային արժեքների կոնֆլիկտը լուծելու համար նրանք նախընտրում են օգտվել էթնիկ մեդիայից՝ հասկանալու «իրենց» և «նրանց» առանձնահատկությունը: Միջազգային մեդիա դաշտի և էթնիկ փոքրամասնությունների ամենօրյա հաղորդակցությունների միջև առկա մեդիա կազմակերպությունները նպաստում են էթնիկ փոքրամասնությունների հաղորդակցության միջավայրի մեծացմանը և ստեղծում են սեփական հավաստի պատկերացումներ՝ մի կողմից, համընդհանուր հաղորդագրությունների և գերիշխող համակարգի, մյուս կողմից՝ մասնավոր նպատակների, համայնքի սպասումների ու պարտավորության զգացման միջև (Cottle 2000: 1-3):

Էթնիկ մեդիա է համարվում այն լրատվամիջոցը, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ և լեզվական փոքրամասնությունների, ինչպես նաև տեղաբնիկների համար և նրանց կողմից (Matsaganis, Katz, Ball-Rokeach 2011: 10): Ըստ ուսումնասիրվող էթնիկ խմբի և երկրի՝ էթնիկ մեդիա կարող են անվանել նաև փոքրամասնության, ներգաղթյալների, Սփյուռքի, համայնքային, տեղային մեդիան: Մենք կիրառում ենք «էթնիկ մեդիա» և «Սփյուռքի մեդիա» եզրույթները, որոնք բնորոշ են հայկական Սփյուռքին:

Էթնիկ մեդիան ամենօրյա պրակտիկաների «սիրտն» է, որը վերարտադրում և փոփոխում է էթնիկ ինքնությունը և մշակույթը, մասնակցում է էթնիկ համայնքներին հուզող քննարկումներին, օժանդակում է լայն սոցիալական գործընթացներին, ինչպես նաև ինքնին կարող է հանդիսանալ համայնքի սոցիալական փոփոխությունների ցուցիչ: Մեդիան մատնացույց է անում Սփյուռքի առկա մարտահրավերները, համայնքի ինտեգրումը, ձուլումը, հատվածականության կամ ծայրահեղականության դրսևորումներն ընդունող հասարակության մեջ:

Սակայն ամենամեծ դերը, որ վերագրվում է էթնիկ մեդիային, էթնիկ և մշակութային ինքնության ձևավորումն է: Էթնիկ ինքնության երեք փոխկապակցված բաղադրիչներից՝ իմացական (գիտելիքներ էթնիկ մշակույթի մասին), վարքային (էթնիկ խմբին պատկանելությունը ցուցադրող վարք) և զգայական (ինքնանույնացում, էթնիկ խմբին պատկանելու զգացում), էթնիկ

մեդիան առավել մեծ ազդեցություն ունի վերջին բաղադրիչի վրա՝ ամրապնդելով պատկանելության զգացումը (Matsaganis, Katz, Ball-Rokeach 2011: 71):

Հայկական Սփյուռքում ինքնության ձևավորման գործում էթնիկ մեդիայի դերը գնահատելու համար ուսումնասիրվել է հայկական երեք համայնքների՝ Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի մեկական պարբերական (որոնք ընտրվել են ըստ որոշակի չափանիշների և յուրաքանչյուր համայնքի մամուլի նախնական ուսումնասիրության հիման վրա): Մամուլի համեմատական ուսումնասիրությունն իրականացվել է բովանդակության վերլուծության մեթոդով: Այն ընդգրկել է երեք պարբերականների՝ «Ноев Ковчег» (Մոսկվա), «Ալիք» (Թեհրան), «Ասբարեզ» (Լոս Անջելես) վեց տարվա (2005-2010 թթ.) հրատարակությունները՝ ներկայացուցչական ընտանիքով («Ալիք» և «Ասբարեզ»՝ 120 համար, «Ноев Ковчег»՝ 72 համար՝ ներառելով շուրջ 3000 հոդված)[1]:

Սփյուռքի երեք պարբերականների բովանդակության վերլուծությունը ցույց տվեց, որ էթնիկ մամուլը լուսաբանում է առավելապես հայկական տեղեկատվություն՝ կապելով էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնելով պահպանել լեզուն և մշակույթը:

Այսպես, հայկական թերթերի նյութերի ընդհանուր ծավալի մեջ հայկական թեմաների[2] տեսակարար կշիռը կազմում է մեծամասնություն «Ասբարեզում» (ԱՄՆ) և «Ալիքում» (ԻԻՀ), և գրեթե կեսը՝ «Ноев Ковчег»-ում (ՌԴ):

Գծապատկեր 1.
Հայկական թեմաների ծավալը մամուլում



Հայկական բովանդակության ծավալը մամուլում ցույց է տալիս տվյալ համայնքի լրատվական պահանջները. գծապատկերի տվյալները ցույց են

1 Հետազոտության մեթոդաբանությունը հանգամանալից ներկայացված է հեղինակի՝ «Հետազոտության մեթոդի ընտրության հիմնավորումը» հոդվածում (Հայրենիք-Սփյուռք առնչությունները… 2012: 26-43):

2 Հայկական թեմաներ են համարվել ՀՀ-ին (ներառյալ Լեռնային Ղարաբաղը), հայկական Սփյուռքին, հայ անհատներին և ընդհանրապես հայությանը վերաբերող նյութերը:

տալիս, որ եթե Մոսկվայի հայ համայնքն ավելի քիչ կարիք ունի հայկական տեղեկատվության, ապա Թեհրանի և Լոս Անջելեսի համայնքներն էթնիկ մամուլից ակնկալում են հենց հայկական լրատվություն:

Էթնիկ խմբի համար էթնիկ մամուլն իրականացնում է երեք հիմնական գործառույթ (Matsaganis, Katz, Ball-Rokeach 2011: 67).

- միավորող (կապում է հայրենիքի հետ՝ ներկայացնելով լուրերն ու այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները),
- կողմնորոշող (կողմնորոշում է նոր երկրում և ինտեգրում է ընդունող հասարակությանը՝ ծանոթացնելով համայնքի ռեսուրսների հետ, տարածելով համայնքային կյանքի մասին պատմություններ),
- խորհրդանշական (տարածում է արժեքներ, գաղափարներ, պահպանում կամ ձևավորում է էթնիկ ինքնությունը):

Էթնիկ մեդիայի բովանդակության մեջ կարևոր է հավասարակշռությունը միավորող և կողմնորոշող գործառույթների միջև, ինչը նպաստում է երկակի մոտեցումների ձևավորմանը, երբ էթնիկ խմբի ներկայացուցիչը գիտի և կարող է օգտագործել ընդունող և ծագման երկրի նորմերը, մշակույթների շրջանակները: Շեշտադրելով միավորող գործառույթը՝ էթնիկ մեդիան կենտրոնանում է ծագման երկրի և/կամ հայրենիքի մասին տեղեկատվության վրա և չի տրամադրում լուրեր, որոնք կօգնեն ներգաղթյալին ինտեգրվելու նոր համայնքում: Եվ հակառակը, իրականացնելով կողմնորոշող գործառույթ, պատմում է հիմնականում համայնքի մասին՝ ապահովելով էթնիկ խմբի ներգրավվածությունը, սակայն հեռացնելով հայրենիքի մասին գաղափարից և չխրախուսելով հայրենադարձությունը:

Ուսումնասիրված պարբերականների հայկական տեղեկատվությունը վերաբերում է Հայաստանին, տվյալ համայնքին և ընդհանուր հայկական Սփյուռքին: Մամուլի նյութերում այս համամասնությունը կարևոր է և կարող է պայմանավորել ինչպես մեդիասպառումը, այնպես էլ ազդեցությունն ինքնության ձևավորման վրա: Այդ պատճառով առանձնացրել ենք թեմաների ընդգրկման շրջանակը կամ ուղղվածությունը հետևյալ երեք խմբերի.

- Հայաստան,
- հայկական համայնք և/կամ Սփյուռք,
- Հայրենիք–Սփյուռք առնչություններ:

Սփյուռքի երեք համայնքների մամուլի հայկական թեմաների մեծամասնությունը վերաբերում է Հայաստանին: Սեփական համայնքների և հայկական Սփյուռքի վերաբերյալ տեղեկատվությունը զգալիորեն զիջում է հայաստանյան լրատվությանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են հայրենիք –Սփյուռք հարաբերություններին:

Աղյուսակ 1.
Հայրենիք–Սփյուռք թեմաների համամասնությունը Սփյուռքի մամուլում (տեսակարար կշիռը հայկական թեմաների մեջ, %)

Թերթ	Թեմայի շրջանակը		
	Հայաստան	Սփյուռք	Հայրենիք-Սփյուռք
«Ноев Ковчег» (Մոսկվա)	81	16	3
«Ասպարեզ» (Լոս Անջելես)	65	30	5
«Ալիք» (Թեհրան)	64	29	7

Մոսկվայի «Ноев Ковчег» պարբերականի հայկական թեմաներով նյութերի ճնշող մեծամասնությունը (81%) վերաբերում է Հայաստանին, 16%-ը՝ սեփական համայնքին ու Սփյուռքին և միայն 3%-ն է վերաբերում հայրենիք-Սփյուռք հարաբերություններին: Սակայն, ի տարբերություն հայկական մյուս համայնքների թերթերի, «Ноев Ковчег»-ն ավելի շատ անդրադարձել է Հայաստանի ներքին խնդիրներին (61%), քան նրա արտաքին քաղաքականությանն ու միջազգային հարաբերություններին (50.1%): Սփյուռքի մասին տեղեկատվությունն առավելապես վերաբերում է տվյալ համայնքին և ընդհանրապես հայկական Սփյուռքին (17.8%): Ռուսաստանի և մասնավորապես Մոսկվայի հայ համայնքի հարաբերությունները բնակության երկրի հետ լուսաբանող նյութերը պարբերականի ընդհանուր ծավալում 5 % են :

«Ասբարեզ» օրաթերթում հայրենիքի մասին տեղեկատվությունը կազմել է 65%: Նյութերի 30%-ը թերթը նվիրել է համայնքային խնդիրների, իրադարձությունների և հայկական Սփյուռքի հիմնահարցերի լուսաբանմանը, 5%-ը՝ Հայաստան–Սփյուռք կապին: Հայաստանի վերաբերյալ թեմաների 51%-ը վերաբերում է երկրի միջազգային հարաբերություններին ու արտաքին կապերին, 22.9%-ը՝ բուն հայաստանյան խնդիրներին: Համայնքի ներքին խնդիրներն ու Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները լուսաբանվել են հավասարապես (համապատասխանաբար՝ 17.8% և 16.4%):

Թեհրանի «Ալիք» թերթը մյուս երկու համայնքային թերթերի համեմատ ամենաշատն է կարևորել հայրենիքի և Սփյուռքի միջև փոխադարձ կապը: Այն կազմել է թեմաների 8.9%-ը: Հայաստանի մասին թեմաները կազմել են 64%, իսկ Սփյուռքի մասին՝ 29%: «Ալիքի» համարներում ՀՀ-միջազգային հարաբերությունների թեմաները կազմել են 52.6%, Հայաստանի վերաբերյալ թեմաները՝ 22.2%, համայնք-բնակության երկիր փոխհարաբերությունները՝ 17.7%, ներհամայնքային կյանքի ու Սփյուռքի մասին՝ 15.9%:

Այսպիսով, հայկական մամուլն ակնհայտորեն շեշտադրում է միավորող գործառույթը: Հայրենիքի մասին տեղեկատվության գերակշռությունը, մի կողմից՝ վկայում է հայկական Սփյուռքի ձգտումը՝ մշակութային երկատվածության իրավիճակում վերադառնալ արմատներին, մշակույթին, անցյալին: Մյուս կողմից՝ էթնիկ մեդիայի հայաստանակենտրոն բովանդակությունը

սփյուռքյան փոփոխվող ինքնությունը փորձում է դարձնել առավել կայուն: Եվ, վերջապես, հայրենիքը դառնում է հայկական տեղեկատվական դաշտի այն միջուկը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են Սփյուռքի համայնքներում՝ անկախ նրանց տարբերություններից:

Էթնիկ մամուլի հայկական տեղեկատվության բովանդակության մեջ կարևոր է նաև լուսաբանվող թեմաների տեսակը: Մենք տիպաբանել ենք թեմաներն ըստ հետևյալ ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային (ներառյալ հոգևոր, գիտակրթական), բարեգործական, ազգային: Ուսումնասիրված երեք թերթերում նշված թեմաների համամասնությունը տարբեր է, սակայն բոլորի համար հայկական թեմաների առաջատարները քաղաքական ու մշակութային ոլորտներն են:

Սակայն հայկական նյութերի համամասնությունը, ըստ ոլորտների, տարբեր է Հայաստանի և Սփյուռքի մասին թեմաներում: Այսպես, եթե Հայաստանն առավելապես ներկայացվում է քաղաքական, սոցիալ-տնտեսական թեմաների շրջանակներում, ապա Սփյուռքը՝ մշակութային:

Գծապատկեր 2.
Հայրենիքի մասին տեղեկատվության բաղադրիչներն ըստ Սփյուռքի մամուլի[3]



	Քաղաքական	Տնտեսություն	Սոցիալական ոլորտ	Մշակույթ	Բարեգործություն	Ազգային հարցեր	Իրավական դաշտ
«Ноев Ковчег» (ՌԴ)	92.3%	38.4%	8.6%	29.1%	1.2%	2.0%	4.6%
«Ալիք» (ԻԻՀ)	87.6%	9.3%	3.8%	25.3%	1.3%	5.9%	3.4%
«Ասպարեզ» (ԱՄՆ)	74.5%	13.2%	5.8%	23.1%	0.7%	2.7%	5.9%

Քաղաքական թեմաները, կազմելով մեծամասնություն և լինելով տեղեկատվական դաշտի կենտրոնում, ավելի մեծ սպառում ու ազդեցություն ունեն լսարանի վրա: Եթե հաշվի առնենք նաև այն, որ քաղաքական թեմաները

3 Այս և հաջորդ գծապատկերներում ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

հիմնականում վերաբերում են Հայաստանին, ապա ակնհայտ է դառնում, որ Սփյուռքի ժամանակակից մամուլն իր խորհրդանշական գործառույթը կատարում է հենց քաղաքական թեմաների մատուցման շրջանակներում՝ ի լրումն բուն մշակութային թեմաների, որոնք առավելապես ներկայացվել են Սփյուռքի մասին թեմաների շրջանակներում:

Գծապատկեր 3.
Սփյուռքի մասին տեղեկատվության բաղադրիչներն ըստ էթնիկ մամուլի



	Քաղաքա-կանություն	Տնտեսու-թյուն	Սոցիալա-կան ոլորտ	Մշակույթ	Բարեգոր-ծություն	Ազգային հարցեր	Իրավա-կան դաշտ
«Ноев Ковчег» (ՌԴ)	32.7%	8.6%	22.5%	77.5%	3.0%	2.8%	7.2%
«Ալիք» (ԻԻՀ)	39.3%	0.8%	3.4%	66.5%	1.4%	7.9%	7.7%
«Ասպարեզ» (ԱՄՆ)	35.5%	3.2%	2.2%	65.2%	2.2%	4.8%	9.3%

Էթնիկ արժեքների տարածման և ազգային ինքնության պահպանմանն են նպաստում նաև մամուլի բովանդակության մեջ պատմական հիշողության վերարտադրումը, ազգային պատմության վերաիմաստավորումը: Հայկական ցեղասպանության մասին մամուլում արծարծվող թեման դրա օրինակն է: Եղեռնի թեման դիտարկվում է բավականին բազմաշերտ՝ ցեղասպանության մասին տեղեկատվության տարածում, ճանաչում և հատուցում, դրան ուղղված գործողություններ, հայ-թուրքական արդի հարաբերություններ և այլն: Հատկանշական է, որ ազգային և քաղաքական համատեքստերում պատմական՝ ցեղասպանության թեմային զուգորդվում է արդիական՝ Ղարաբաղյան հիմնահարցը, ինչը նույնպես հայկական մամուլի ուշադրության կենտրոնում է:

Մշակույթի վերաբերյալ մամուլի նյութերն առանձնանում են ոչ միայն նրանով, որ ավելի շատ ներկայացնում են Սփյուռքը, քան Հայաստանը, այլ նաև առաջատարն են մյուս թեմաներից ընդհանրական հայկական կամ հայրենիք–Սփյուռք կապի վերաբերյալ նյութերով: Մշակութային տեղեկատվության խճանկարը բավականին բազմազան է էթնիկ մամուլի բովանդակության մեջ:

Գծապատկեր 4.
Մշակութային թեմաներն էթնիկ մամուլում

Մշակութային արժեքնե-րի պահպանում	Տոներ	Կրոն, եկեղեցի
Մշակութային արժեքների ոչնչացում	Պատմամշակութային իրադարձություններ	Կրթություն
Գրականություն	Մշակութային քաղաքականություն	Հրատարակչություն
Թատրոն	Մշակութային գործիչներ	Երգարվեստ
Գեղարվեստ, ցուցահանդեսներ	Թանգարաններ, պատկերասրահներ	Սպորտ
Միջմշակութային առնչություններ	Մշակութաբանություն, ուսումնասիրություններ	Մշակութային միջոցառումներ

Մշակութային միջսահմանային իրավիճակում և այլազգի միջավայրում ապրող հայերի համար սեփական մշակութային արժեքների վերաբերյալ մամուլի տեղեկատվությունը կարող է մշտարթուն պահել ձուլման վտանգը, ինչպես նաև վերակազմավորել հատվածական մշակութային ինքնությունը: Մշակութային նյութերի բովանդակության միջոցով մամուլը նաև կարող է ամրագրել և պահպանել սեփական յուրահատուկ մշակութային կապիտալը և հարստացնել միջմշակութային կապիտալը:

Մամուլի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս Սփյուռքի հայերի կյանքի ամենօրյա առնչությունը Հայաստանի հետ: Նրանք չեն կարող վերադառնալ անցյալ և ոչ էլ լիովին մտնել ընդունող երկրի քաղաքական ու սոցիալ-մշակութային կյանքի մեջ: Էթնիկ մեդիայի սպառումը նրանց մշտապես ցույց է տալիս «այստեղ» (բնակության երկիր) և «այնտեղ» (հայրենիք) սահմանագիծը: Էթնիկ մամուլը ստանձնում է որոշիչ դեր նրանց, այսպես կոչված, սփյուռքյան ինքնության վերակազմման գործում:

Սփյուռքյան ինքնությունը որոշվում է՝ ընդունելով բազմազանության և տարբերությունների անհրաժեշտությունը: Այն կայուն արտադրվում և վերարտադրվում է կրկին՝ միգրացիոն նոր հոսքերին զուգահեռ: Նաև վերարտադրվում է էթնիկ խմբի անդամների ցանկությունը՝ վերադառնալ «կորուսյալ ծագմանը»: Կտրված լինելով ծագման տեղից՝ մշակութային և էթնիկ գաղափարները դառնում են առավել այժմեական (Shi 2005: 55-72): Սփյուռքի ներկայացուցիչները խմբավորվում են՝ հիշվող կամ երևակայվող հայրենիքի շուրջ, օգտագործում են հայրենի մշակույթը, ձևավորում են էթնիկ համայնքներ, որպեսզի վերստեղծեն իրենց կյանքը: Նրանց համար մեդիան ստեղծում է այդ միջանկյալ դաշտը. առաջադրում է հարցեր մշակույթի, գաղափարախոսության վերաբերյալ և սցենարներ սոցիալական ու քաղաքական կյանքում: Մեդիան տրամադրում է ինքնության կետեր՝ նշելով էթնիկ խմբի խորհրդան-

շական սահմանները (Барт 2006: 17-18), վերամիավորելով մշակույթները կորսված վայրերի հետ և իրագործելով հիշողության, միֆերի, փնտրելու և վերաբացահայտելու ցանկությունները: Այն միավորում է Սփյուռքի հիշողությունը, գեներացնում է Սփյուռքի հավաքական պատկերացումները, որոնք ոչ միայն ազդում են առանձին անհատական ինքնությունների վրա, այլև կամրջում են շատ ցրիվ սուբյեկտներին «երևակայական համայնքի» մեջ:

Չնայած հայկական Սփյուռքի տարբեր հատվածների առանձնահատկություններին ու տարբերություններին՝ էթնիկ մեդիան ձևավորում է որոշակի էթնոմշակութային ընդհանրական արժեքներ: Ինքնությունը ձևավորվում է մեդիայում՝ որպես իրադարձությունների պատմման դիսկուրսիվ արդյունք: Սփյուռքի մամուլի բովանդակության մեջ խորհրդանշական տեղեկատվություն փոխանցելով ընդհանուր անցյալի ու բոլորի հայրենիքի մասին և Սփյուռքին մասնակից դարձնելով հայրենիքում ընթացող ամենօրյա գործընթացներին՝ ստեղծվում է մշակութային ու էթնիկ միասնություն:

Գրականություն

***Հայրենիք-սփյուռք առնչությունները…* 2012,**
Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ: Երևան. Գիտություն, 26-43:

***Cottle S.* 2000.**
Ethnic minorities and the media: Changing cultural boundaries. Open University Press: Philadelphia, Buckingham, 1-3.

***Matsaganis M. D., Katz V. S. and Ball-Rokeach S. J.* 2011.**
Understanding Ethnic Media: Producers, Consumers, and Societies. SAGE Publications, Inc., 10, 71.

***Shi Y.* 2005.**
Identity Construction of the Chinese Diaspora, Ethnic Media Use, Community Formation, and the Possibility of Social Activism. Journal of Media and Cultural Studies, 19(1): 55-72.

***Tololyan Kh.* 1996.**
Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment. Diaspora: A Journal of Transnational Studies, 5(1): 1-2.

***Барт Ф.* 2006.**
Этнические группы и социальные границы. Социальная организация культурных различий, Сборник статьей (Под. Ред. Ф. Барта), Москва: Новое издательство, 17-18.

***Кара-Мурза С. Г.* 2005.**
Манипуляция сознанием. Москва: Эксмо.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Էջադրումը և ձևավորումը
Արթուր Հարությունյանի

Շապիկը՝
Ռոման Հովսեփյանի

Habitus-ի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանին** և **Մարիամ Շահմուրադյանին**՝ խմբագրական աշխատանքներին աջակցելու և խորհուրդների համար:

Շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Լևոն Աբրահամյանին**՝ իր հեղինակած երգիծանկարները տրամադրելու համար:

Խմբագրության հասցեն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15,
Habitus-ի էլեկտրոնային փոստը՝ habitus.iae.am@gmail.com
Կայքը՝ www.iae.am, www.iae.am/hy/HABITUS

Editorial office:
Institute of Archaeology and Ethnography, NAS RA.
Address: 15 Charents str., 0025, Yerevan, Armenia
Email of Habitus: habitus.iae.am@gmail.com
Web page: www.iae.am, www.iae.am/en/Habitus-2

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 70×100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
16.5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY · 2

HABITUS · 2